

## ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

### ԼԱՅՊՅԻԴԻ ՈՒՍՈՒՅԶԱԿԱՆ ՍԵՄԻՆԱՐԻԱՆ

(Տպաւորութիւններ)

1911 թւականի ամառը այցելութեան գնացի Լայպցիգի ուսուցչական սեմինարիան, Վադուցուանից ցանկանում էի ի մօտոյ ծանօթանալու գերմանական մի բարեկարգ ուսուցչանոցի և մանաւանդ այդ դպրոցներէց մէկի վարժոցի հետ: Այդ դպրոցի ներքին կեանքը այնքան հետաքրքիր էր, որ հաւատացած եմ, կարող է ուշադրութեան արժանի նկատուել նաև մեր ընթերցող հասարակութեան կողմից:

Նախ քան սեմինարիան ներս մտնելը, այցելուն մի քանի րոպէ հարկադրուած է կանգ առնել այդ հսկայական, եռյարկանի շէնքի առաջ և հիանալ շէնքի արտաքին գեղեցկութեամբ և նպատակայարմարութեամբ, պատուհանները բազմաթիւ և մեծ-մեծ, ֆասադը ընդհանրապէս պարզ է առանց աւելորդ դարձերի, բայց տպաւորիչ իր պարզութեան մէջ:

Գլխաւոր մուտքի դռնով ներս եմ մտնում առաջին յարկի միջանցքը. դասամիջոց է, աշակերտները անց ու դարձ են անում. մի քանի րոպէ կանգնում եմ միջանցքում. բոլոր անցնող աշակերտները ինձ բարեւում են խորը յարգանքով: Ես նրանց հիւրն եմ, ուրեմն և հասկանալի էր քաղաքավարական այդ արտայայտութիւնները: Դիտմամբ հետաքրքրեցի իմանալու, թէ արդեօք կպատահի մի աշակերտ, որը իմ մօտովը անցնէր և չբարեւէր. այդպիսի մէկը չեղաւ: Մի քանի րոպէից յետոյ խնդրեցի մի աշակերտի, որ ինձ առաջնորդէ տեսչի մօտ. պէտք էր տեսնել և հիանալ այդ բարեկիրթ պատանուն, ձեռքերը ցած ձգած



լսում է ինձ, դէմքի ամեն մի մասը ցոյց է տալիս կենդանացած ուշադրութիւն և պատրաստակամութիւն օգտակար լինելու, պատասխանում է ինձ հանգիստ և քաղաքավարի տոնով առանց ձեռքերին աւելորդ ազատութիւն տալու և ապա ինձ առաջնորդում է տեսչի ընդունարանը, մինչև տեսչին իմ մասին զեկուցում տալը քաջում է այդ պատանին բոլոր նեղութիւնները և երբ իր պարտականութիւնները կատարած է զգում, ներօգութիւն է խնդրում ինձնից և հեռանում դասից չուշանալու համար։ Ձարմանալի են այդ դպրոցի սաները, բոլորն էլ քաղաքավարի, պատրաստական և համեստ, կռպիտ վարմունքներ, գուհկաբանութիւններ ես չկարողացայ նկատել այդ աշակերտների կողմից նոյն իսկ իրար վերաբերմամբ ապագայում կրկնուող մի քանի այցելութիւնների ժամանակ։ Քաղաքավարութիւնը կազմում էր այդ աշակերտութեան բնաւորութեան հիմնական յատկութիւններից մէկը։ Դպրոցի վարիչները լաւ էին ըմբռներ, որ վարմունքների կրթութիւնը դպրոցական հասակից պէտք է սկսել։

Մի փոքր ժամանակից յետոյ կանչուեցի տեսչի մօտը, որը 45-ին մօտ և մի շատ եռանդուն անձնաւորութիւն էր։ Երբ տեղեկացաւ իմ նպատակի մասին և յետոյ կարգած այն թուղթը, որով Սաքսոնիայի մինիստրութիւնը թոյլ էր տալիս ինձ այցելելու Սաքսոնիայի բոլոր դպրոցները, տեսուչը ուրախութեամբ թոյլ տուեց ինձ երբ և որքան ժամանակ ես ցանկանում եմ լինել իրենց դպրոցում և մանրազնին ուսումնասիրել դպրոցի ինձ հետաքրքրող մասերը։ Ոչ շատ երկար տևող մասնաւոր զրուցակցութիւնից յետոյ ինձ տարաւ ուսուցչանոց, ծանօթացրեց բոլոր ուսուցիչների հետ և խնդրեց, որ ինձ առաջնորդեն այն դասարանները, ուր ես կցանկանամ։ Ահա այդ ժամից ես մի քանի օրով դարձայ այդ սեմինարիայի անդամը և սկսեցի իմ աշխատանքները։ Տեսուչը ինքը մանկավարժական խնդիրներով զբաղուող մի անձնաւորութիւն էր, աստիճանաբար զարգացել էր դպրոցական կեանքի մէջ, ապրել էր դպրոցով և շնչում էր նրանով, նա նոյն իսկ



համալսարանում մի գործնական պարապմունքի վարիչն էր։ Սեմինարիայի գլուխն էր անել տեսականօրէն և գործնականօրէն մարզուած, ելուած մի անձնաւորութիւն, դպրոցը ուղի-չուղի պէտք է ենթարկուէ, յարմարուէ այդպիսի վարիչին։

Գրականութիւնից ինձ յայտնի էր, որ տեսուչների խնդրի վրայ գերմանական կառավարական շրջանները մեծ ուշք են դարձնում։ Լայպցիգի օրինակը շատ սիրուն փաստ էր ինձ համար այդ բանի մէջ համոզուելու։ Բայց չեմ կարծում, թէ բոլոր սեմինարեաները այդպիսի յաջողակ պայմանների մէջ են, այլապէս անհասկանալի կլինէր սեմինարիաների ուսուցիչների երբեմնի գանգատները։ Սեմինարիայի ուսուցիչները ևս գտնւում էին իրանց կոչման բարձրութեան վրայ, բոլորն էլ համալսարանականներ էին և մասնադէտ, բացի սեմինարիայի վարժացի մի քանի ուսուցիչներից։ Զուտ սեմինարական դասարաններում չի կարող պաշտօնավարել բարձրագոյն կրթութիւն չստացած մարդը։ Ահա մի հիմնական միջոց սեմինարիաների ուսումնական մասը բարձր պահելու համար։

Եւր սկսեցի արդէն ուսումնասիրութեան գործը, առաջին խնդիրը դարձրի ծանօթանալ շէնքի կազմի հետ։ Յարմարութիւն, յարմարութիւն և յարմարութիւն։ Դասարանները մեծ և լուսաւոր, հարկաւոր չափի օգանցքներով հոգացուած։ Միջանցքները շատ լուսաւոր էին և հնարաւորութիւն էին տալիս ամեն մի դասարանի համար առանձին մուտք ունենալու։ Մուտքերը դէպի բակը այնպէս էր և այնքան, որ աշակերտները շատ մեծ խմբումներով և անհրաժեշտ դուրս չգան։ Ներկայ ճարտարապետութիւնը ասում է յարմարութիւն ապրելու կամ այն նպատակի համար, որի համար շինուած է շէնքը և ապա լոյս։ Այդ տիպի շէնք է Լայպցիգի սեմինարիան, Իսկ շէնքի մարքութիւնը զուտ գերմանական էր, Այս խօսքերը կարծեմ շատ բան է պարունակում։ Փոշին, անմաքրութիւնը հալածուած է այդ դպրոցից։ յատակները, և միջանցքները մաքուր, պատերը, առաստաղները մաքուր և ազատ փո-



շուց, Այլ կերպ էլ անհնար է գերմանացու տունը երևակայել, եւ երեխան մեծանալով մի այսպիսի շրջապատի մէջ, ինքն եւս ակամայից դառնում է մաքրասէր, Սեմինարիայի շէնքը իշխող մաքրութիւնը աշակերտի դաստիարակութեան համար մեծ դեր է խաղում, նրան դարձնում է կռեկտ, ակուրատ, մաքրասէր, Այդ է խնդրի ճիշտ ըմբռնումը, կրթութեան և մանաւանդ դաստիարակութեան պահանջները միշտ գիտակից մտաւոր աշխատանքի միջոցաւ չպէտք է հրամցնուեն աշակերտներին, Անգիտակից, անիմաց եղանակը մնայուն սովորութիւններ արմատացնելու համար շատ մեծ անհրաժեշտութիւն են կազմում, Հազար ճառիւր դու աշակերտին մաքրութիւնից, նոյն իսկ առողջապահութեան յատուկ ժամեր սահմանիր, Բայց եթէ մաքուր չէ շրջապատը, մեռնում է ամեն ինչ, տպաւորութիւնը մարում է հոգու մէջ անհետ, Գերմանացին այդ լաւ է հասկացել, ուստի և աշակերտին դրել է համապատասխան շրջապատի մէջ:

Մաքրութեան հետ միասին բարձր աստիճանի վրայ է դնելում նաեւ դպրոցի առողջապահական հանգամանքները և մանաւանդ մարմնամարզութիւնը, Դպրոցի բակում, մայր շէնքին շատ մօտ շինուած է մի առանձին յարմար մարմնամարզարան, մեծ, բարձր, հարկաւոր գործիքներով լի: Եւ ներկայ եղայ բարձր դասարանցիների մարմնամարզական պարապմունքներին, աշակերտները հագնւած էին թեթեւ, հեշտութեամբ նկատուում էին բազուկների և ոտքերի զարգացած մկանները, որոնք կենդանի ապացոյց էին աշակերտների առողջ և պնդակազմ մարմնի: Աշակերտները այնպիսի մեծ և ուժգին թռիչքներին էին անում, որ ես մնում էի զարմացած: Եւրոպացին վաղուց է ըմբռնել մարմնի կրթութեան կարևորութիւնը, նրա համար մարմինը և հոգին երկու տարբեր շահեր ունեցող հակադիր ուժեր չեն, այլ մի ամբողջութիւն են կազմում և իրար հետ փոխադրեցութեան մէջ են, Մարմինը կրթելու աշխատանքը նաեւ յօգուտ հոգու է լինում, մարմինը ինքն ըստ ինքեան մի արժէք է և նրան կրթելը մի հասկանալի պահանջ, Ազգային մրցութիւնների ժամանակ յաղթում են յաճախ



առողջ մկաններ ունեցողները, մարմնով վատասեռուող ազգերի մէջ բոյն է դնում նաև հոգեկան այլասեռումը։ Այս ճիշտ ըմբռնման պատճառով է, որ գերմանական փոքրի շատէ կարգաւորուած դպրոցի մօտ կտեսնէք մարմնամարդարան, ուր դարձնում են անհատական և սոցիալական կեանքի բախտաւորութեան մի կողմը։ Այս տեսակէտից շատ և շատ օրինակելի են գերմանական դպրոցները մեզ համար։

Լայպցիգի սեմինարիայի ուսումնական մասը ևս մեծ հետաքրքրութիւն է ներկայացնում։ Սեմինարիան ունի վեց դասարաններ և մի վարժոց։ Ես առանձին ուշք դարձրի վարժոցի կազմակերպութեան վրայ։ Վարժոցը ունի ութ տարուայ կուրս և կազմուած է վեց առանձին և մի միացեալ դասարաններից։ Միացուած էին վերջին երկու դասարանները։ Աշակերտների թիւը ամեն մի դասարանում շատ չէր, ազնիւներ և տղաներ միասին են սովորում։ չկար ոչ մի ուսուցչուհի։ Սեմինարիայի աշակերտները իրաւունք չունին վարժոցի դասարաններում ամիսներով կամ շաբաթներով դաս տալ։ Նրանք կարող են միմիայն փորձնական դասերի ժամանակ դասաւանդել, իսկ պարտաւոր են շաբաթական որոշ ժամեր լսել դասեր զանազան առարկաներից։ Ամիսներով դաս տալը սրանց թոյլ չի տրոււմ, որովհետև ենթադրոււմ է, որ նրանք իբրև անփորձներ վատ կտանեն դասերը և աշակերտները չեն անցնիլ պահանջուած ծրագրի ըստ։ Վարժոցի դասատուները բոլորն էլ սեմինարիայի մասնագէտ ուսուցիչներն են կամ յատուկ մարդիկ են միմիայն վարժոցի համար։ Սեմինարիայի մասնագէտ ուսուցիչը դաս է տալիս իր առարկայից նաև վարժոցում, որպէս զի այդպիսով հնարաւորութիւն ունենայ ծանօթանալու թէ իր առարկան ինչպէս է դրուած ժողովրդական դպրոցում, ինչպիսի մեթոդով պէտք է դաս տալ, այդպիսով ուսուցչը յարմարութիւն է ունենում ծանօթանալու ժողովրդական դպրոցի որ և է առարկայի մեթոդիկայի հետ։ Իսկ դա շատ մեծ նշանակութիւն ունի սեմինարիայի աշխատանքի համար, որովհետև աշակերտները լսում են այդ մասնագէտ-



ների դասերը վարժացում, այդ մասնագէտների մօտ են տալիս իրենց փորձնական դասերը նրանց առարկաներից և նրանց ներկայութեամբ է կատարւում դասի քննադատութիւնը: Մանկավարժական փորձնական պարապմունքները Գերմանիայում չի կենդրոնացած մի անհատի ձեռքում:

Վարժացում ամենից շատ հետաքրքրում էր ինձ առաջին պատրաստականը և մանաւանդ մայրենի լեզուի ուսուցումը, ուստի և իմ ուշադրութիւնը կենդրոնացրի յատկապէս այդ դասարանի վրայ: Իմ բախտից առաջին պատրաստականում սկսել էին այբուբենի ուսուցումը: Մի տարի առաջ ես Գէորգեան ճեմարանի վարժացում հայերէն էի դաս տուել այն մեթոդով, որը կեանք էր առել Լայպցիգում և տարածուել միւս քաղաքներում և նոյն իսկ օտար երկրներում: Լայպցիգի սեմինարիայում այբուբենը ուսուցանւում էր այնպէս, ինչպէս ես էի փորձել էջմիածնում: Ամեն մի հնչիւն ընդունւում է իբրեւ մի առանձին կեանք ունեցող էութիւն, որը մաքուր դրութեամբ պատահում է բնութեան զանազան հանդամանքների մէջ: Ուսուցիչը հնարում է մի որ և է յաջողակ մանկական պատմութիւն, որի մէջ մի կամ մի քանի անգամ յիշւում է այդ մաքուր հնչիւնը: Այդ օրը ուսուցիչը անցնում էր «վ» հնչիւնը. պատմեց մանկական կեանքից վերցրած մի դէպք, ուր քամին է փչում և այդ հնչիւնը հանում, ուրիմն քամին ձայն է հանում «վ, վ, վ»: Երեխաները հաճոյքով հետեւում են այդ պատմութեան և նոյն հաճոյքով կրկնում այդ հնչիւնը մենակ կամ խմբովին: Այս բոլոր պարապմունքների ժամանակ կեանք եռանդ կար աշակերտների մէջ, ուրախութիւն, հաճոյք, զուարճութիւն: Այդ ինձ զարմանալի չէր թւում, այդ մեթոդի առաւելութիւնները ինձ շատ լաւ յայտնի էր. մեր երեխաները ևս ձանձրոյթի անբաւականութեան նշաններ անգամ ցոյց չեն տուել տառերի իւրացումների ժամանակ: Այբուբենը անցեալում որքան տհաճութեան, դառն արցունքների պատճառ է դարցած եղել, այժմ նա անչափ հեշտացել է երե-



խառնուրդի համար. ինչ առաջ անհնար էր լինում երեք տարուայ մէջ անել, այժմ անուամ է մի տարուայ ընթացքում: Աշխատանքի էկոնոմիան այս պարապմունքի համար ևս գըտնուած է. պէտք է միայն մեզ ուսուցիչները աւելի լրջօրէն ծանօթանան նորագոյն եղանակների հետ, որպէս զի իրենց աշակերտների առաջ մեղապարտ չմնան: Այդ միևնոյն ամառը ես եղայ Լայպցիգի ուրիշ դպրոցներում, օրիորդաց սեմինարիայում, ժողովրդական տարրական դպրոցներում, ամեն տեղ էլ գտայ նոյն մեթոդի կիրառումը. նա համարեա առանց ըացառութեան մտել էր բոլոր առաջին պատրաստականները: Իսկ դրականութիւնից էլ ինձ վաղուց յայտնի էր, որ այդ մեթոդը պաշտպանութիւն է դառել շատ հռչակաւոր մանկավարժների կողմից: Նոյն իսկ Հերբարդեան դպրոցին պատկանող մի ականաւոր մանկավարժ Ռուդէն, առանձին ուշադրութիւն է դարձնում այդ մեթոդի վրայ և յանձնարարում է լայն չափերով գործադրել այդ մեթոդը, որպէս զի նրա մասին մի վերջնական եզրակացութիւն հանուի: Այդպիսի աշխատանքներ, ցանկալի է, մեր մօտ ևս արմատներ բռնեն. յուսով ենք, որ անպայման յաջողութեամբ կ'պսակուեն:

Ներկայ եղայ նաև սեմինարական դաստարանների պարապմունքներին. առաւօտեան աշակերտները շատ շուտ վեր են կենում, սերտողութիւնից յետոյ դասի են նստում մինչև ճաշ, ճաշից յետոյ մօտ ժամու կէս հանգստից յետոյ վերսկսում են դասերը: Այնպիսի օր կայ, որ մի դասարան եօթ կամ ութ ժամ պաշտօնական պարապմունքներ ունի չհաշուած պաշտօնական սերտողութիւնները: Սերտողութիւնների հետ միասին օր է պատահում, որ աշակերտը 10 կամ 11 ժամ նստէ պարապմունքի սեղանի շուրջը: Որպէս զի հայ ընթերցողի համար պարզուէ այդ սեմինարիաների լարուած պարապմունքները, տալիս ենք սաքսոնական սեմինարիայի պաշտօնական ծրագիրը, որը կէտ առ կէտ գործադրւում էր Լայպցիգի սեմինարիայում:



## Գ ա ս ա ց ու ց ա կ

|                                   | I դաս |      | II դաս |      | III դաս |      | IV դաս |      | V դաս |      | VI դաս |      | Ընդհանուր թիւը |       |
|-----------------------------------|-------|------|--------|------|---------|------|--------|------|-------|------|--------|------|----------------|-------|
|                                   | պարտ. | ազատ | պարտ.  | ազատ | պարտ.   | ազատ | պարտ.  | ազատ | պարտ. | ազատ | պարտ.  | ազատ | պարտագիր       | ազատ. |
| Կրօն . . . . .                    | 4     | —    | 4      | —    | 4       | —    | 4      | —    | 4     | —    | 3      | —    | 23             | —     |
| Գերմաներէն . . . . .              | 3(4)  | —    | 3(4)   | —    | 3(4)    | —    | 3(4)   | —    | 4(4)  | —    | 3(3)   | —    | 19(23)         | —     |
| Լատիներէն . . . . .               | 6(7)  | —    | 7(6)   | —    | 5(3)    | —    | 4(3)   | —    | 2(2)  | —    | 2(2)   | —    | 27(23)         | —     |
| Աշխարհագրութիւն . . . . .         | 2     | —    | 2      | —    | 2       | —    | 2      | —    | 2     | —    | —      | —    | 10             | —     |
| Պատմութիւն . . . . .              | 2     | —    | 2      | —    | 2       | —    | 2      | —    | 2     | —    | 2      | —    | 12             | —     |
| Բնական պատմ. . . . .              | 2     | —    | 2      | —    | 3       | —    | —      | —    | —     | —    | —      | —    | 7              | —     |
| Ֆիզիկա . . . . .                  | —     | —    | —      | —    | —       | —    | 3      | —    | 2     | —    | 2      | —    | 7              | —     |
| Թուարանութ. և երկրաչափ . . . . .  | 4     | —    | 4      | —    | 5       | —    | 4      | —    | 4     | —    | 3      | —    | 24             | —     |
| Մանկավարժութիւն . . . . .         | —     | —    | —      | —    | —       | —    | 4      | —    | 5     | —    | 5      | —    | 14             | —     |
| Մանկ. գործնական պարապ. . . . .    | —     | —    | —      | —    | —       | —    | —      | —    | 4     | —    | 4      | —    | 8              | —     |
| (Երգեցողութիւն. . . . .           | 3     | —    | 3      | —    | 3       | —    | 3      | —    | 3     | —    | 3      | —    | 18             | —     |
| Ներդաշնակութ. . . . .             | 1     | —    | —      | 1    | —       | 1    | —      | 1    | —     | 1    | —      | 1    | 1              | 5     |
| Մուզիկա { Զութակ . . . . .        | 1     | —    | 1      | —    | 1       | —    | —      | —    | —     | —    | —      | —    | 3              | —     |
| Դաշնամուր . . . . .               | —     | 1    | —      | 1    | —       | 1    | —      | 1    | —     | —    | —      | —    | —              | 4     |
| Օրգէլ ածել . . . . .              | —     | —    | —      | —    | —       | 1    | —      | 1    | —     | 1    | —      | 1    | —              | 4     |
| Գեղագրութիւն . . . . .            | 2     | —    | 2      | —    | 1       | —    | 1      | —    | —     | —    | —      | —    | 6              | —     |
| Սղագրութիւն . . . . .             | —     | —    | —      | 2    | —       | 2    | —      | 1    | —     | —    | —      | —    | —              | 5     |
| Վարմնամարզութիւն . . . . .        | 3     | —    | 3      | —    | 3       | —    | 2      | —    | 1     | —    | 2      | —    | 16             | —     |
| Նկարել . . . . .                  | 2     | —    | 2      | —    | 2       | —    | 3      | —    | 2     | —    | 1      | —    | 10             | —     |
|                                   | 36    | 1    | 35     | 4    | 34      | 5    | 35     | 4    | 35    | 2    | 30     | 2    | 205            | 18    |
| Դասարանների ժամերի թիւը . . . . . | 37    |      | 39     |      | 39      |      | 39     |      | 37    |      | 32     |      | 223            |       |



Պարապմունքը շատ շատ է։ Առարկաները իրար վրայ է թափած։ Լարած է աշակերտների հոգեկան աշխատանքը։ Ճիշտ է գերմանացին աշխատասէր է և դիմացկուն։ դիմացկուն է նաև նրա նոր սերունդը, բայց և այնպէս փաստը մնում է փաստ, որ սեմինարիաների պարապմունքները ծայրայեղութեան է հասցրած։ Գերմանական մանկավարժական դրականութեան մէջ շատ է խօսուում աշակերտների յոգնածութեան մասին, այդ փտանդաւոր հիւանդութիւնից ազատ չեն բոլոր դպրոցական տիպերը։ Յատկապէս սեմինարեան յոգնածութեան մի վայր պէտք է դառնայ, որովհետև միջնակարգ դպրոցներից և ոչ մէկն էլ այնքան պարապմունքներ չունի։ Սեմինարիայի այս կողմը ես համարում եմ՝ շատ և շատ պակասաւոր և բարեկարգութեան կարճատև Լայպցիգի սեմինարիային այցելութիւններ անելիս պարզօրէն գիտակցեցի այդ կոնկրետ փաստի դիմաց, որ մեր երկրի դպրոցական թեֆուրները կուրօրէն չպէտք է նմանուեն գերմանականին և կամ առհասարակ եւրոպականին, բայցի այն, որ տարբեր երկրներ տարբեր պահանջներ ունին իրենց մէջ, եւրոպական դպրոցը գեռ շատ բացասական կողմեր ունի և շատ անգամ այդ յոռի կողմերը այնքան ազդակող, որ անհնար է հաշուի չառնել այդ բոլորը։ Մեր սեմինարիաները չենք կարող գերմանականի օրինակով ձևուել, աշակերտներին յոգնեցնել անչափ առարկաների ծանրութեան տակ, կըլինէր գիտակցաբար կատարած մի յանցանք։

Հարց է, թէ ինչո՞ւ առարկաները այդքան շատ են։ Գերմանացին ուսուցչին անուանում է ժողովրդի դաստիարակ, նա մեծ կարծիք ունի նրա կուլտուրական առաքելութեան մասին։ Առանց խտրութեան բոլոր հասարակական խաւերը այդ համոզմանն են։ Բնականաբար դաստիարակից շատ բան է պահանջւում, ուսուցիչը շատ իմացութիւններ պէտք է ունենայ, բազմակողմանի լինի և ազգային կուլտուրայի բոլոր մասերին հաղորդակից։

Ուսուցիչները պատրաստւում են սեմինարիաներում, ուրեմն բնականօրէն սեմինարիաների ծրագրի մէջ պէտք է



մտնեն բազմաթիւ առարկաներ, որպէս զի այնտեղ աւար-  
տող ուսուցիչը բազմակողմանի կրթութիւն ստանայ: Դա-  
սարանները քիչ են, իսկ առարկաները շատ, ուստի  
և մի դասարանում կիսուում են բազմաթիւ առարկաներ:  
Վերջերս ծրագրւում է, սեմինարիաներում մի դասարան  
աւելացնել, այդ բարեփոխութիւնից յետոյ միմիայն գեր-  
մանական սեմինարիան կմտնէ բարեկարգ շաւղի մէջ և  
աշակերտներին այնպէս չի յոգնեցնիլ, ինչպէս այժմ:  
Իսկ թէ երբ տեղի կունենայ այդ բարեփոխութիւնը,  
դժուար է հաստատ մի բան ասել: Գերմանիան այն երկիրն  
է, որը մի բան անելիս նախ հարկւր չափում է և մէկ  
կտրում, ամեն մի ընթացիկ գաղափար ծագում ածում և  
կնանքի մէջ հող է բռնում երկար տարիների ընթացքում:

Գ. Էդիխան

